ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ռազմավարական (այդ թվում՝ նախընտրական) ծրագրի կատարման վերաբերյալ

(2013թ. հոկտեմբեր - 2014թ. դեկտեմբեր)

ք. Երևան,
«23» դեկտեմբերի 2014թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

Փաստաբանների պալատի աշխատակազմ և
կադրային քաղաքականություն 4

Փաստաբանների պալատի նոր շենքը 5

Հանրային պաշտպանի գրասենյակ 8

Փաստաբանական դպրոց 12

Փաստաբանների մասնագիտական վերապատրաստում 14

Փաստաբանների պալատի մարզային քաղաքականություն 17

Արտաքին հարաբերություններ 19

Միջազգային համագործակցություն 21

Փաստաբանների պալատի կողմից իրականացված ծրագրերը..... 29

Փաստաբանների պալատի կողմից իրականացվող
հանրային միջոցառումները 32

Հասարակության հետ կապերի ընդլայնում 34

Փաստաբանների պալատի պաշտոնական կայքէջ 36

Փաստաբանների պալատի այլ կառույցների գործունեությունը 41

Վիճակագրական տվյալներ 44

Ամփոփաթերթ՝ 2013 – 2017 թվականների նախընտրական
ծրագրի հիմնական ուղղությունների կատարման 47

* * *

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Սույն հաշվետվությունը ներկայացված է ի կատարումն Հայաստանի Հանրապետության Փաստաբանների պալատի կանոնադրության 17.3 կետի 18-րդ ենթակետի պահանջի, համաձայն որի՝ ***Փաստաբանների պալատի նախագահը՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտին Փաստաբանների պալատի խորհրդին է ներկայացնում իր տարեկան ռազմավարական ծրագրի կատարման հաշվետվությունները:***

Հաշվետվության մեջ ներկայացված է 2013 թվականի հոկտեմբերից 2014 թվականի դեկտեմբեր ամիսների ընթացքում Փաստաբանների պալատի խորհրդի 21.05.2014թ. թիվ 11/1-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի 2013 և 2014 թվականների ռազմավարության ծրագրի, ինչպես նաև 2013-2017 թվականների նախընտրական ծրագրի կատարմանն ուղղված միջոցառումների համառոտ բովանդակությունը:

ՀՀ փաստաբանների պալատի
նախագահ՝ Արա Զոհրաբյան

* * *

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանների պալատի աշխատակազմը համալրվել է նոր որակյալ կադրերով, մասնավորապես՝ նշանակվել են Փաստաբանների պալատի նախագահի երեք տեղակալներ (երկուսը՝ հասարակական հիմունքներով), ֆինանսական տնօրեն, մամուլի խոսնակ, նախագահի խորհրդականներ, որոնք իրենց աջակցությունն են ցուցաբերում Փաստաբանների պալատի նախագահին՝ իր նախընտրական, ինչպես Փաստաբանների պալատի ռազմավարական ծրագրի իրականացմանը:

Ներկայումս Փաստաբանների պալատի աշխատակազմն իրենից ներկայացնում է մի թիմ, որն ի զորու է լուծելու Փաստաբանների պալատի առջև ծառացած հարցերը, ինչպես նաև Փաստաբանների պալատի կանոնադրությամբ և «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված խնդիրներն ու նպատակները:

Փաստաբանների պալատի նախագահի *«ՀՀ փաստաբանների պալատի վարչակազմակերպական կառուցվածքը, աշխատակազմի աշխատողների ծառայողական լիազորությունների շրջանակը, ինչպես նաև աշխատանքի նկարագրի օրինակելի ձևը հաստատելու մասին»* հրամանով սահմանվել է Փաստաբանների պալատի վարչակազմակերպական կառուցվածքը, ինչպես նաև աշխատակազմի աշխատողների ծառայողական լիազորությունների (աշխատանքային գործառույթ) շրջանակը, որի համաձայն հստակեցվել են Փաստաբանների պալատի հաստիքացուցակով սահմանված համապատասխան պաշտոններ զբաղեցնող անձանց վերապահված լիազորությունները (գործառույթները):

ՀՀ փաստաբանների պալատի
աշխատակազմի ղեկավար, ի.գ.թ. Մանե Կարապետյան

* * *

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆՈՐ ՇԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության կառավարության՝ *««Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին գույք ամրացնելու, շինարարություն իրականացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 27-ի N 1540-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»* 2012 թվականի մայիսի 10-ի թիվ 601-Ա որոշման 5-րդ մասի 2-րդ կետի հիման վրա Փաստաբանների պալատին իր կանոնադրական գործունեությունն իրականացնելու համար անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Զաքիյան փողոցի 2 (երկու) հասցեում (Ասքանազ Մռավյանի անվան նախկին միջնակարգ դպրոց) գտնվող շենքի 1560.1 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով 2-րդ և 4-րդ հարկերը:

2014 թվականի ապրիլի 22-ին տեղի է ունեցել Փաստաբանների պալատի նոր շենքի բացման հանդիսավոր արարողությունը, որին մասնակցել են Հանրապետության Նախագահը, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահը, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը, վճռաբեկ դատարանի երկու պալատների նախագահները, ՀՀ արդարադատության նախարարը, ինչպես նաև այլ բարձրաստիճան այրեր:

Հրավիրյալների շարքում էին նաև յոթ պետություններից փաստաբանական միավորումների ներկայացուցիչներ, ինչպես նաև Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (նստավայրը՝ Բրյուսել) փոխնախագահը և փաստաբանների միջազգային միության (նստավայրը Փարիզ) պատվավոր նախագահը, ԿԱՌՊԱ-ների ազգային միության (UNCA) գլխավոր քարտուղարը (նստավայրը Փարիզ):

Փաստաբանների պալատի շենքի բացման արարողության հետ զուգահեռ Փաստաբանների պալատն արտերկրից ժամանած հյուրերին հայոց պատմությանն ու մշակույթին ծանոթացնելու նպատակով վերջիններիս համար կազմակերպել էր նաև ճանաչողական այցեր Հայաստանի պատմամշակութային վայրեր, ինչպես նաև մասնագիտական կլոր սեղան-քննարկումներ՝ *«Փաստաբանական ինստիտուտի մարտահրավերներն ու արդի զարգացումները»* և *«Ֆրանսիական ԿԱՌՊԱ կոնցեպտի ներդրման հեռանկարները ԱՊՀ պետություններում»* թեմաներով:

Փաստաբանների պալատի արտերկրից ժամանած հյուրերն արժանացել են նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընդունելությանը, ինչպես նաև ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդում իրենց հարգանքի տուրքն են մատուցել Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին:

Ներկայումս Փաստաբանների պալատի նոր շենքը համալրված է նյութատեխնիկական բոլոր անհրաժեշտ միջոցներով, շենքում կան երկու դահլիճներ, որոնցից մեկն օգտագործվում է Փաստաբանների խորհրդի նիստերի անցկացման համար, իսկ երկրորդը (մեծ դահլիճը)՝ փաստաբանների վերապատրաստման դասընթացները, Փաստաբանների պալատի ակումբի նիստերը, հանդիպումները և այլ միջոցառումները կազմակերպելու համար: Նշված դահլիճները հագեցած են բոլոր ժամանակակից նյութատեխնիկական սարքավորումներով (համակարգիչներ, պրոեկտոր, էկրան, տեսաձայնագրման համակարգեր):

Փաստաբանների պալատում գործում է նաև ընդունարան-տեղեկատու, որտեղ փաստաբանները, ինչպես նաև Փաստաբանների պալատ այցելող քաղաքացիները կարող են սպառիչ տեղեկատվություն ստանալ իրենց հետաքրքրող հարցերի վերաբերյալ, այդ թվում՝ կարող են հարմարավետ կահավորված սպասասրահում ծանոթանալ փաստաբանների ցուցակին:

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 20-րդ հոդվածը՝ երաշխավորելով յուրաքանչյուր անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, սահմանում է, որ օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում *<u>պետական միջոցների հաշվին:</u>*

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն անվճար իրավական օգնության տրամադրումն ապահովվում է ***հանրային պաշտպանի գրասենյակի*** միջոցով:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի նախագահը՝ ... վերահսկողություն է իրականացնում հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության նկատմամբ:*

Այդ լիազորության իրականացման համար Փաստաբանների պալատի նախագահի 30.10.2013թ. թիվ 20-Ա հրամանով ստեղծվել է ժամանակավոր աշխատանքային խումբ, որի հիմնական խնդիրն է եղել հանրային պաշտպանի գրասենյակում իրականացնել առկա խնդիրների գնահատում և Փաստաբանների պալատի նախագահին ներկայացնել գրավոր եզրակացություն՝ դրանց լուծման վերաբերյալ հիմնավոր առաջարկներով:

2014 թվականի առաջին եռամսյակում կատարվել են հետևյալ գործողությունները՝

- ***<u>հանրային պաշտպանների մրցութային կարգով ընտրություն.</u>***

Փաստաբանների պալատի խորհրդի 15.01.2014թ. թիվ 01/7-Լ որոշմամբ հաստավել է *«Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման»* կարգը, որով հանրային պաշտպանի նշանակման սկզբունքային նոր ընթացակարգ է նախատեսվել, որն ապահովում է օբյեկտիվությունը և աշխատանքի անցնող հանրային պաշտպանների մասնագիտական պատրաստվածության բարձր մակարդակի առկայությունը:

2014 թվականի փետրվարին կայացել է հանրային պաշտպանների աշխատանքի անցնելու առաջին մրցույթը, որի արդյունքում գործող 50 հանրային պաշտպանների համար նախատեսված հաստիքներից 20-ը համալրվեցին մրցույթով անցած և համապատասխան ուղղվածություն ունեցող փաստաբաններով:

2014 թվականի դեկտեմբերին կայացավ հանրային պաշտպանների աշխատանքի անցնելու երկրորդ մրցույթը, որի արդյունքներով հանրային պաշտպանի գրասենյակում Երևան քաղաքում 4 լրիվ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մարզերում 4 լրիվ և 3 կես թափուր հաստիքներ 2015 թվականի հունվարին կհամալրվեն նոր հանրային պաշտպաններով:

- ***<u>ներդրվել են հանրային պաշտպանի աշխատանքի հսկողության և վերահսկողության նոր մոդելներ.</u>***

Փաստաբանների պալատի նախագահի կողմից հաստատվել է հանրային պաշտպանի մասնագիտական պատրաստվածության և աշխատանքի արդյունավետության գնահատման հրահանգը, համաձայն որի սահմանվել են հանրային պաշտպանների գնահատման չափորոշիչներ: Այն հանրային պաշտպանները, որոնք բավարարում են Հրահանգով սահմանված չափորոշիչներին, հնարավորություն կունենան առանց համապատասխան մրցույթին մասնակցելու, մեկ տարով երկարաձգելու իրենց աշխատանքային պայմանագրերը:

Հանրային պաշտպանների գործունեության նկատմամբ հսկողությունը և վերահսկողությունն ապահովելու նպատակով Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության (ABA Ceeli Inc.) և Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի օժանդակությամբ ներկայումս աշխատանքներ են տարվում հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը ստուգելու և աշխատանքը պլանավորելու համար համակարգչային հատուկ ծրագրի մշակման և ներդրման ուղղությամբ: Համակարգչային ծրագրի տեխնիկական առաջադրանքն արդեն մշակված է: Ներկայումս դոնորների հետ բանակցություններ են տարվում համակարգչային ծրագրի մշակումը ֆինանսավորելու համար:

Հանրային պաշտպանի էլեկտրոնային համակարգը, բացի վերահսկողության ժամանակակից մեխանիզմների ապահովումից,

տալու է հետևյալ հնարավորությունները.

- հանրային պաշտպանի գործունեության վիճակագրության վարում.
- հանրային պաշտպանի կողմից տրամադրվող հաշվետվության ավտոմատացում.
- հանրային պաշտպանների միջև, հանրային պաշտպանների և հանրային պաշտպանի գրասենյակի, ինչպես նաև փաստաբանների պալատի միջև տեղեկատվության ավտոմատ փոխանակման ապահովում.
- հաճախորդների տվյալների շտեմարանների վարում.
- տիպային փաստաթղթերի գեներացում.
- յուրաքանչյուր գործով (խորհրդատվություն, փաստաթղթի կազմում, ներկայացուցչություն, պաշտպանություն և այլն) առանձին էլ. գրասենյակի վարման հնարավորություն.
- դատական նիստերի կամ դատավարական այլ գործողությունների վերաբերյալ օրացույցի վարում և դրանց անցկացման ժամանակի և տեղի վերաբերյալ համապատասխան հիշեցում.
- էլեկտրոնային արխիվի վարում.
- համակարգում անհրաժեշտ չափանիշներով տեղեկատվության որոնումների իրականացում:

Որպես հանրային պաշտպանների գործունեության նկատմամբ վերահսկողության մոդելներ կիրառվում են նաև դատական նիստերի մոնիտորինգը և վստահորդների հետ հարցազրույցները:

2014 թվականի հոկտեմբերին հանրային պաշտպանների գործունեության վերահսկողության առավել արդյունավետ կազմակերպման նպատակով Փաստաբանների պալատի հաստիքացուցակը համալրվեց մոնիթորինգի պատասխանատուի հաստիքով, որը զբաղեցնող անձը հանրային պաշտպանների կողմից վարվող գործերի հետազոտման միջոցով ներկայացնում է յուրաքանչյուր հանրային պաշտպանի կողմից վարվող գործերի վերաբերյալ տեղեկատվություն:

- ***<u>բարելավվել են նաև հանրային պաշտպանի գրասենյակի նյութատեխնիկական միջոցները.</u>***

2013 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին Հանրային պաշտպանի գրասենյակը համալրվել է նոր տեխնիկայով: Հանրային

պաշտպանի գրասենյակի համար ձեռք են բերվել ավտոմեքենաներ, որոնք համապատասխան գրաֆիկով ապահովում են հանրային պաշտպանների տեղաշարժը դատարաններ և քրեակատարողական հիմնարկներ:

- ***Ստեղծվել է հանրային պաշտպանի գրասենյակում մոնիթորինգի բաժին, որի խնդիրն է իրականացնել դիտարկումներ հանրային պաշտպանների գործունեության ուղղությամբ, այդ թվում՝ հարցազրույցներ կատարել նրանց վստահորդների և հարազատների հետ, ներկա գտնվել դատական նիստերին, ուսումնասիրել հանրային պաշտպանների վարույթները:***

* * *

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի կառավարման խորհրդի 05.11.2013թ. թիվ 18-Լ որոշմամբ ստեղծվել էր Ուսումնական գործընթացի որակի գնահատման հանձնաժողով, որի համար որպես հիմնական նպատակ սահմանվել էր Փաստաբանական դպրոցում կազմակերպվող ուսուցման որակի նկատմամբ մշտական հսկողության իրականացումը:

Սկզբունքային փոփոխություններ են կատարվել նաև «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամում ունկնդիրների մասնագիտական ուսուցման ոլորտում: Մշակվել և ներկայումս արդեն կիրառվում են Փաստաբանական դպրոցում ընդունելության քննությունների թափանցիկությունն ապահովող մեխանիզմներ:

Փաստաբանական դպրոցում որակական փոփոխությունների է ենթարկվել ուսումնական գործընթացը: Ուսումնառության տեսական և գործնական փուլերի համար մշակվել են ուսումնական պլաններ և ուսումնական ծրագրեր:

Փաստաբանական դպրոցում ներդրվել է ըստ մասնագիտացման ուսումնառության մոդելը: 2014 թվականի աշնանային հոսքի ընդունելության քննությունն առաջին անգամ կազմակերպվեց ըստ քրեական և քաղաքացիաիրավական մասնագիտական ուղղվածությունների:

Փաստաբանական դպրոցում ներդրվել է նաև հեռավար ուսուցման ծրագիրը, որի միջոցով Հայաստանի Հանրապետության մարզերի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչությունը հնարավորություն ունի առցանց տարբերակով ուսուցումն անցնելու Փաստաբանական դպրոցում: 2014 թվականի աշնանային հոսքում արդեն իսկ երկու ԼՂՀ ունկնդիր հեռավար կարգով ուսուցում են անցնում Փաստաբանական դպրոցում:

Ուսումնառության առանձնահատուկ կարգ է նախատեսվել հատուկ դիմորդների համար: Որպես այդպիսիք են հանդիսանում 10 տարվա փաստաբանի, դատախազի կամ դատավորի ստաժ ունեցող անձինք, որոնք հայտարարված տեղերի շրջանակում

հնարավորություն են ստացել ընդունվելու Փաստաբանական դպրոց առանց ընդունելության քննությունների, և նրանց ուսուցումը կատարվում է հատուկ ծրագրով:

Առաջին անգամ Փաստաբանական դպրոցում ուսումնառության համար նախատեսվել են անվճար տեղեր:

2013 թվականի հոկտեմբերին ներդրված ավանդույթի համաձայն՝ Փաստաբանական դպրոցի արդեն երեք հոսքերի շրջանավարտ հավակնորդներ փաստաբանական գործունեության արտոնագրեր են ստանում Փաստաբանների պալատի պատմուճաններով և գլխարկներով:

* * *

Որոշակի փոփոխություններ են կատարվել նաև փաստաբանների մասնագիտական վերապատրաստման բնագավառում:

Ներկայումս փաստաբանների մասնագիտական վերապատրաստումը կազմակերպում է Փաստաբանների պալատը:

Փաստաբանների պալատի խորհրդի կողմից 05.02.2014թ. թիվ 3/6-Լ որոշմամբ հաստատվել է «Փաստաբանների վերապատրաստման դասընթացներ անցնելու ժամաքանակը և կարգը», որով սահմանվել է փաստաբանների վերապատրաստման դասընթացներ անցնելու ընթացակարգը, ժամկետները և ժամերի հաշվարկը:

Մասնագիտական վերապատրաստման շրջանակներում Փաստաբանական էթիկայի սկզբունքների վերաբերյալ փաստաբանների գիտելիքները զարգացնելու նպատակով սահմանվել է յուրաքանչյուր տարի առնվազն չորս ժամ «Փաստաբանի վարքագծի կանոնները (դեոնթոլոգիա)» առարկայի շրջանակներում հաստատված թեմաներով վերապատրաստում անցնելու փաստաբանների պարտականությունը:

Փաստաբանների պալատից և Փաստաբանական դպրոցից բացի՝ փաստաբաններին վերապատրաստելու իրավունք է նախատեսվել նաև Փաստաբանների պալատի խորհրդի կողմից հավատարմագրված այլ կազմակերպությունների համար:

Փաստաբանների պալատի խորհրդի 05.02.2014թ. թիվ 3/7-Լ որոշմամբ հաստատվել է «Փաստաբանների վերապատրաստում իրականացնող հաստատությունների հավատարմագրման» կարգը, որով նախատեսվել են վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու համար կազմակերպություններին հավատարմագիր տալու հստակ չափանիշներ:

Նշված կարգի համաձայն մեկ տարի ժամկետով հավատարմագրվել են՝

- ***Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA CEELI Inc.) հայաստանյան ներկայացուցչությունը.***
- ***Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) երևանյան գրասենյակը.***

- ***Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակը.***
- ***Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (USAID) հայաստանյան գրասենյակը.***
- ***«Փաստաբանների միջազգային միություն (համագործակցություն)» հասարակական կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունը.***
- ***Միացյալ ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակը.***
- ***«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը.***
- ***«Մտավոր սեփականության իրավունքի կենտրոն» հիմնադրամը:***

2014 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մարզերում ընդհանուր կազմակերպվել են շուրջ 100 վերապատրաստման դասընթաց (հավատարմագրված կազմակերպությունների հետ ներառյալ), որոնց ընթացքում մասնագիտական վերապատրաստում են անցել ավելի քան 950 փաստաբան:

Նախատեսվել է հեռավար (դիստանցիոն) ուսուցման ձևով վերապատրաստում անցնելու հնարավորություն: Կարգի համաձայն՝ հեռավար ձևով վերապատրաստմանը կարող են մասնակցել միայն՝

- Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի վարչական տարածքներում գրանցված և գործունեություն ծավալող փաստաբանները,
- այլ պետությունում գտնվող փաստաբանները,
- ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ թույլատրված տեղաշարժման սահմանափակումներով պայմանավորված առողջական խնդիրներ ունեցող փաստաբանները:

Հեռավար ձևով վերապատրաստման համակարգը դեռևս գտնվում է փորձարկման փուլում, իսկ հեռավար կարգով առաջին դասընթացը նախատեսվում է մեկնարկել 2015 թվականի հունվարից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ պահին հեռավար վերապատրաստման համակարգը դեռևս կիրարկված չէ, Փաստաբանների պալատը Հայաստանի Հանրապետության մարզերի փաստաբանների վերապատրաստումն ապահովելու համար առանձին

վերապատրաստման դասընթացներ է կազմակերպել Սյունիքի, Վայոց Ձորի, Արմավիրի, Տավուշի, Շիրակի, Գեղարքունիքի և Լոռու մարզերի փաստաբանների համար:

Փաստաբանների մասնագիտական գիտելիքները կատարելագործելու նպատակով Փաստաբանների պալատը նաև փորձ է անում արտերկրից ժամանած հրավիրյալ դասախոսների և առանձին բնագավառների մասնագետների միջոցով կազմակերպել փաստաբանների վերապատրաստումը:

Վերապատրաստման անցած ժամաքանակի վերաբերյալ տեղեկատվությունն այսուհետ հրապարակվում է Փաստաբանների պալատի կայքի՝ յուրաքանչյուր փաստաբանի անձնական էջում, ինչի միջոցով փաստաբանի համար իր լրացված (ինչպես նաև մնացած) վերապատրաստման ժամերի վերաբերյալ տեղեկատվությունն առավել մատչելի է դարձել:

* * *

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության մարզերում և մարզերի քաղաքներում գործող Փաստաբանների պալատի անդամ փաստաբաններին համախմբելու, ինչպես նաև նրանց մոտ փաստաբանական գործունեություն իրականացնելու ընթացքում առաջացող խնդիրները վեր հանելու և լուծելու նպատակով հաստատվել է *«Մարզերում համակարգում իրականացնելու մասին»* կարգը, համաձայն որի՝ Փաստաբանների պալատի մարզային քաղաքականությունը մարզերում իրականացվում է մարզային համակարգողների և մարզերի քաղաքներում պատասխանատուների միջոցով:

2013 թվականի դեկտեմբերից 2014 թվականի հուլիս ամիսների ընթացքում մարզային համակարգման շրջանակներում՝

- մարզային համակարգողներ են նշանակվել Արագածոտնի, Տավուշի և Վայոց Ձորի մարզերում:
- մարզային համակարգողներ են ընտրվել Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու և Սյունիքի մարզերում:
- քաղաքների պատասխանատուներ են նշանակվել Արմավիրի մարզի Արմավիր քաղաքում, Արագածոտնի մարզի Թալին քաղաքում, Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում, Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում և Լոռու մարզի Ալավերդի և Ստեփանավան քաղաքներում:

Փաստաբանների պալատի խորհրդի 24.09.2014թ. թիվ 27/6-Լ որոշմամբ ստեղծվել է Փաստաբանների պալատի Հյուսիսային ներկայացուցչություն, որն առավել արդյունավետ է դարձնելու Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում փաստաբանների խնդիրների համակարգման և Փաստաբանների պալատի մարզային քաղաքականության իրականացման գործընթացը:

Հայաստանի Հանրապետության մարզերում գրասենյակ (աշխատասենյակ) չունեցող փաստաբանների համար աշխատանքային պայմաններ ապահովելու նպատակով Փաստաբանների պալատը հանդես է եկել նախաձեռնությամբ, որի շրջանակներում փորձ է արվում համապատասխան մարզային քաղաքներում տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով

փաստաբաններին անվճար հիմունքներով ապահովել գրասենյակային տարածքներով (աշխատասենյակով), ի հատուցումն որի՝ տվյալ փաստաբաններն ամսական առնվազն մեկ օր անվճար իրավաբանական խորհրդատվությամբ կապահովեն համայնքի բնակչությանը:

Նշված նախաձեռնության շրջանակներում հանդիպումներ են տեղի ունեցել Արարատի և Արագածոտնի մարզպետների և Գյումրիի քաղաքապետի հետ:

Այս նախաձեռնության շրջանակում մարզային համակարգողի գրասենյակ է բացվել Արարատի մարզում:

Բացի այդ, մարզային համակարգողների գրասենյակներ են բացվել Արմավիրի մարզում (քաղաք Էջմիածին) և Շիրակի մարզում (քաղաք Գյումրի):

* * *

Փաստաբանների պալատի պատվիրակությունը 2013 թվականի նոյեմբերի 7-ից 8-ը պաշտոնական այցով գտնվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում

Այցը նպատակ էր հետապնդում սկիզբ դնել հայկական երկու հանրապետությունների փաստաբանների միջև համագործակցությանը: Այցի ընթացքում պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել՝

- ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանի,
- ԼՂՀ վարչապետ Արայիկ Հարությունյանի,
- ԼՂՀ արդարադատության նախարար՝ Արարատ Դանիելյանի,
- ԼՂՀ գերագույն դատարանի նախագահ՝ Նարինե Նարիմանյանի և
- ԼՂՀ փաստաբանների պալատի նախագահ՝ Ալեքսանդր Գալստյանի հետ:

Արցախի Նախագահի հետ հանդիպման ընթացքում պատվիրակությունը հայտնել էր, որ Փաստաբանների պալատը

մտադիր է ԼՂՀ փաստաբանների պալատի հետ համագործակցել՝ փաստաբանների վերապատրաստման և ունկնդիրների համար փաստաբանական դասընթացները կազմակերպելու հարցերում:

ԼՂՀ փաստաբանին իր բնակավայրից համակարգչով Փաստաբանական դպրոցի դասընթացներին մասնակցելու, իսկ ԼՂՀ իրավաբանի ուսուցումն ապահովելու նպատակով նախատեսվել էր հեռավար ուսուցման համակարգի ներդրումը: Փաստաբանական դպրոցում հեռավար ուսուցման համակարգը ներդրվել է, և 2014 թվականի աշնանային հոսքում արդեն իսկ երկու ԼՂՀ ունկնդիր հեռավար կարգով ուսուցում են անցնում Փաստաբանական դպրոցում:

Հանդիպումների ընթացքում քննարկվել է ԼՂՀ զորամասերում իրավագիտակցության բարձրացման նպատակով Հայաստանից փաստաբաններ Արցախ գործուղելու հարցը՝ զորամասերում դասախոսություններ և խորհրդատվություն անցկացնելու նպատակով: Նշված նախաձեռնությունն իրականացվել է «Իրազեկ բանակ» փաստաբանական ծրագրի շրջանակներում:

ԼՂՀ փաստաբանների հետ հանդիպման ժամանակ քննարկվեց փաստաբանության առջև ծառացած ընդհանուր խնդիրները:

Արցախ կատարած մեկ այլ հանդիպման շրջանակներում Փաստաբանների պալատի նախագահի կողմից ԼՂՀ փաստաբանների համար վերապատրաստման դասընթաց-քննարկում անցկացվեց:

ԼՂՀ փաստաբանների պալատի հետ համագործակցության շրջանակներում Փաստաբանների պալատը պատրաստակամություն էր հայտնել ԼՂՀ փաստաբանների պալատի համար ապահովել կայքէջի մշակումը: 2015 թվականի հունվարից արդեն կգործարկվի ԼՂՀ փաստաբանների պալատի www.advocatesnkr.am կայքէջը:

* * *

Փաստաբանների պալատի պատվիրակությունը 2013 թվականի նոյեմբերի 19-ից 24-ը պաշտոնական այցով գտնվել է Ֆրանսիայի Հանրապետությունում

Այցի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ հետևյալ կառույցների ներկայացուցիչների հետ՝

✓ ***Փարիզի փաստաբանների պալատ***

Հանդիպման ընթացքում կողմերը ստորագրեցին ***համագործակցության մասին պայմանագիր***, որով վերահաստատվեցին երկու միությունների միջև տարիներ ի վեր ձևավորված բարեկամական հարաբերությունները, ինչպես նաև համաձայնություն ձեռք բերվեց շարունակել համագործակցել փաստաբանների վերապատրաստման, փորձի փոխանակման, գիտաժողովների և սեմինարների անցկացման և մի շարք այլ հարցերում:

Պայմանագրի ստորագրման գործընթացին ներկա էր նաև Փարիզի փաստաբանների պալատի նորընտիր նախագահ Պիեռ-Օլիվիե Սյուղը, ով ընդունել է պաշտոնական այցով Հայաստան այցելելու հրավերը:

Փարիզի փաստաբանների պալատի հետ ստորագրված հուշագրի շրջանակներում 2014 թվականի հոկտեմբեր ամսից Փաստաբանների պալատի անդամ մեկ փաստաբան Փարիզի փաստաբանական պալատի կողմից Հայաստանին հատկացված տեղերի շրջանակում մասնակցում է Փարիզի փաստաբանների պալատի կողմից կազմակերպված *«Միջազգային ստաժ 2014»* ծրագրին, որի ընթացքում հայ փաստաբանը կանցնի մեկամսյա դասընթաց Փարիզի փաստաբանական դպրոցում, ինչպես նաև մեկամսյա փորձնակություն՝ Փարիզի առաջատար փաստաբանական գրասենյակներից մեկում:

Փարիզի փաստաբանների պալատը հանդես է եկել նաև Փարիզի փաստաբանների պալատի՝ *«Իրավունքի Մեծ Գրադարան»* էլեկտրոնային ռեսուրսին միանալու առաջարկով, ինչը հայ փաստաբաններին հնարավորություն կտա տեղադրել իրենց հեղինակած աշխատությունները (գիտական հոդվածներ, ելույթներ և այլ նյութեր) ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով: Նշված համագործակցությունը նախատեսվում է ամրապնդել համապատասխան հուշագրի ստորագրմամբ:

✓ ***ԿԱՌՊԱ-ների ազգային միություն (UNCA)***.

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի Հանրապետությունում ԿԱՌՊԱ համակարգի զարգացման հեռանկարները, ինչպես նաև այդ գործընթացում առկա խնդիրները, այդ թվում՝ օրենսդրական բարեփոխումները:

ԿԱՌՊԱ-ների ազգային միության ներկայացուցիչները պատրաստակամություն հայտնեցին շարունակել աջակցել Հայաստանում համակարգի կայացմանը և ներկայացրեցին այլ երկրների հաջող փորձը ԿԱՌՊԱ ոլորտում, որը կարող է օգտակար լինել Հայաստանի Հանրապետությունում համակարգի զարգացման համար:

Կողմերը նաև կարևորել են վերջերս ԿԱՌՊԱ-ների միջազգային միության ստեղծումը, որի համահիմնադիրներ են հանդիսանում նաև Փաստաբանների պալատը:

✓ ***Փաստաբանների պալատն անդամակցել է Փաստաբանների միջազգային միությանը (UIA)***

2013 թվականի դեկտեմբերի 7-ին Փարիզում տեղի ունեցած փաստաբանների միջազգային միության տնօրենների կոմիտեի նիստին հաստատվել է Փաստաբանների պալատի հայտը միությանն անդամակցելու վերաբերյալ: Կառույցին անդամակցությունը Փաստաբանների պալատին հնարավորություն է ընձեռում 120 երկրներ ներկայացնող ավելի քան 200 փաստաբանական միությունների հետ համագործակցություն հաստատել, ինչպես կառույցների, այնպես էլ անհատ փաստաբանների մակարդակով, ստանալ աջակցություն իրավաբանների և մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված նախաձեռնություններին, ստանալ օրենքների և իրավական մասնագիտությունների վերաբերյալ այլ կարգավորումների վերջին փոփոխություններն ու զարգացումները, անդամներին համար անհրաժեշտ իրավունքի բնագավառների թեմաների վերաբերյալ գիտաժողովների և այլ միջոցառումների կազմակերպում և դրանց մասնակցության հնարավորություն:

Միությունը հիմնադրվել է 1927 թվականին և մշտապես հանդես է գալիս մարդու իրավունքների և փաստաբանական միությունների պաշտպանության ոլորտում, մասնավորապես միությունը CCBE կառույցի հետ համատեղ մասնակցել են անդամ պետություններում փաստաբանի մասնագիտության անկախությանը վտանգող գործընթացների դեմ պայքարող նախաձեռնություններին:

✓ ***Մարսելի փաստաբանների միության ներկայացուցիչը Հայաստանում***

2013 թվականի հոկտեմբեր ամսին Փաստաբանների պալատը հյուրընկալել է Մարսելի փաստաբանների միության անդամ, փաստաբան Դենիս Ֆեռեի, ով Հայաստան էր ժամանել Մարսելի քաղաքապետի պատվիրակության կազմում: Հանդիպման ընթացքում

պարոն Ֆեռեն պատրաստակամություն հայտնեց քայլեր ձեռնարկել Փաստաբանների պալատի և Մարսելի փաստաբանների միության միջև կապերի ստեղծման և զարգացման ուղղությամբ:

Հանդիպմանը հաջորդել է Մարսելի փաստաբանների միության նախագահի կողմից պատվիրակված փաստաբան, ազգությամբ հայ Էռվե Ղևոնդյանի այցը, որի ընթացքում պարոն Ղևոնդյանը ներկայացրեց Մարսելի փաստաբանների միության նախագահի առաջարկը առաջիկայում կազմակերպել փոխադարձ այցեր՝ համագործակցության հուշագիր ստորագրելու և միությունների բարեկամական կապն ամրապնդելու նպատակով:

Քննարկվել են նաև Մարսելի փաստաբանների հետ փորձի փոխանակման ծրագրերի իրականացման հեռանկարները:

✓ ***Փաստաբանների պալատը համագործակցության հուշագրեր է ստորագրել***

2014 թվականի ապրիլի 23-ին Փաստաբանների պալատը փոխըմբռնման հուշագրեր է ստորագրել ***Վրաստանի փաստաբանների ընկերակցության (ասոցիացիայի), Բելառուսի փաստաբանների հանրապետական կոլեգիայի և Մարսելի փաստաբանների պալատի*** հետ: Համագործակցության հուշագրերով գործընկեր պալատները պատրաստակամություն են հայտնել

համագործակցել փաստաբանության և փաստաբանական գործունեության ոլորտում, միմյանց աջակցել փաստաբանական ինստիտուտների զարգացմանը հարցում:

✓ ***Հանդիպում հունահայ փաստաբանի հետ.***

2014 թվականի փետրվար ամսին Փաստաբանների պալատում հյուրընկալվեց Հունաստանի Ալեքսանդրուպոլիս քաղաքի փաստաբանների պալատի անդամ ազգությամբ հայ փաստաբան Աննա Սաակիդուն, որը Հայաստանի Ֆրանկոֆոն փաստաբանների միության հետ համատեղ կազմակերպված հանդիպում-քննարկման ընթացքում պարզաբանեց Հունաստանում փաստաբանական գործունեություն իրականացնելու առանձնահատկությունները:

✓ ***Ֆրանսահայ փաստաբանները Հայաստանում.***

2014 թվականի օգոստոս ամսին ֆրանսահայ փաստաբաններ Սևագ Թորոսյանը և Պատրիկ Արաբյանը մասնավոր այցերով հյուրընկալվել են Փաստաբանների պալատում:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ հայ-ֆրանսիական փաստաբանական կառույցների կողմից համատեղ միջոցառումների իրականացման, այդ թվում՝ գիտաժողովի կազմակերպման հարցերը:

✓ ***Լեհ փաստաբանները Հայաստանում.***

2014 թվականի սեպտեմբերի 16-ին Փաստաբանների պալատ է այցելել Լեհաստանի փաստաբանների պատվիրակությունը: Այցը նպատակ ուներ հայ և լեհ փաստաբանական համայնքների միջև հաստատել փոխադարձ կապեր:
Հանդիպման ժամանակ ներկայացվել է ՀՀ փաստաբանների պալատի գործունեության ուղղությունները՝ միջազգային համագործակցությունը, անվճար իրավաբանական օգնության տրամադրման շրջանակներն ու մեխանիզմները:

ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը ներկայացրել է Դպրոցի հնարավորությունները կրթական համակարգը և դասավանդվող առարկաների առանձնահատկությունները:

Լեհական պատվիրակության ղեկավարը նշել է, որ ՀՀ փաստաբանների պալատը և Դպրոցը օրինակելի է այլ երկրների փաստաբանների պալատների համար և հույս հայտնել, որ այս

հանդիպումը հիմք կդնի ամուր համագործակցության:

✓ ***Ֆրանսիայի Մոնպելիե քաղաքի փաստաբանների միության հետ համագործակցության հաստատման ծրագրեր.***

Փաստաբանների պալատի և Ֆրանսիայի Մոնպելիե քաղաքի փաստաբանների միության միջև համագործակցության շրջանակներում 2014 թվականի հոկտեմբերի 28-ից 31-ը Փաստաբանների պալատի պատվիրակությունը Ֆրանսիայի Մոնպելիե քաղաքում մասնակցել է «Փաստաբանների ազգային Կոնվենցիա» միջոցառմանը: Յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ անցկացվող այս միջոցառմանը Փաստաբանների պալատի պատվիրակությունից բացի՝ միջոցառմանը մասնակցում էին մոտ 5.000 հրավիրյալներ, այդ թվում՝ Ֆրանսիայի քաղաքների փաստաբանների պալատների նախագահներ, Ֆրանսիայի փաստաբանների ազգային խորհրդի անդամներ, ֆրանսիացի փաստաբաններ և այլ պետությունների փաստաբանական համայնքների մոտ 200 ներկայացուցիչներ:

Մոնպելիե քաղաքի փաստաբանների պալատի նախագահ Լյուք Քիրքաչարյանը, ով ազգությամբ հայ է, իր բացման խոսքում ողջունել է Փաստաբանների պալատի նախագահի մասնակցությունը այդ միջոցառմանը, նշելով, որ ցեղասպանության 100 ամյակի տարելիցին ընդառաջ այս հանդիպումը առավել կամրապնդի փոխադարձ կապերը:

✓ ***«Ֆրանկոֆոն փաստաբանական միավորումների» միջազգային միությանն անդամակցություն.***

Փաստաբանների պալատը ստացել է «Ֆրանկոֆոն փաստաբանական միավորումների» միջազգային միությանն անդամակցության հրավեր-առաջարկ, որն ընդունվել է Փաստաբանների պալատի կողմից:

Ֆրանկոֆոն փաստաբանական միավորումների միջազգային միությանը Փաստաբանների պալատի անդամակցության հայտը կհաստատվի միության առաջիկա նիստին:

ՀՀ փաստաբանների պալատը այս տարվա հուլիս ամսին առաջարկ է ստացել անդամակցել «Ֆրանկոֆոն փաստաբանական միավորումների» միջազգային միությանը, որին համաձայնել է և անդամակցության հայտ է ներկայացրել: 2014թ. հոկտեմբերի 18-ի Միության ընդհանուր ժողովում քննարկվել և հաստատվել է Հայաստանի փաստաբանների պալատի անդամակցության մասին օրակարգային հարցը:

«Ֆրանկոֆոն փաստաբանական միավորումների» միջազգային միությունը ստեղծվել է 1985թ Փարիզում, որին այսօր անդամակցում են աշխարհի շուրջ 40 երկրների փաստաբանական միություններ: Այս կազմակերպության կանոնադրական նպատակներն են ապահովել անդամ փաստաբանական միությունների միջև համագործակցությունը՝ հարգելով միմյանց անկախությունը, պաշտպանել անդամ միությունների անկախությունը, զարգացնել պաշտպանության իրավունքը և ապահովել արդար դատաքննության կանոնները, նպաստել անդամ երկրների փաստաբանական համայնքներում փաստաբանի վարքագծի կանոնների պահպանմանը: Նշենք, որ «Ֆրանկոֆոն փաստաբանական միավորումների» միջազգային միությունը միավորում է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության անդամ երկրների փաստաբանական միությունները:

Հայաստանը Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության ասոցացված անդամ է դարձել 2008թ-ից:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԿԱՊԵՐ Է ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ՍՈՖԻԱՅԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Փաստաբանների պալատի նախագահի միջազգային հարաբերությունների գծով խորհրդական, խորհրդի անդամ Մարտուն Փանոսյանը 2014թ. նոյեմբերի 20-ից 22-ը Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում մասնակցել է «Բուլղարիայում առաջին փաստաբանական ակտ» ընդունման տարեդարձին նվիրված միջոցառմանը: Միջոցառմանը մասնակցում էին ավելի քան 400 հրավիրյալներ՝ Բուլղարիայի քաղաքների փաստաբանների պալատների նախագահներ, բուլղարացի փաստաբաններ և այլ պետությունների փաստաբանական համայնքների մոտ 20 ներկայացուցիչներ, այդ թվում ներկայացուցիչներ Փարիզի և Մարսելի փաստաբանական միություններից, Փաստաբանների Միջազգային Միության նախագահը, Չեխիայի Հանրապետության պալատի նախագահը և այլ փաստաբանական կառույցների ներկայացուցիչներ:

Սոֆիայի փաստաբանների միության նախագահ Պյոտր Կիտանովն իր խոսքում ողջունելով Փաստաբանների պալատի ներկայացուցչի մասնակցությունը միջոցառմանը՝ նշել է, որ այդպիսի հանդիպումների շնորհիվ, Հայոց ցեղասպանության 100 ամյակի տարելիցին ընդառաջ, առավել կամրապնդվեն փոխադարձ կապերը երկու փաստաբանական համայնքների միջև և հայտարարել է, որ 2015թ. ապրիլի 24-ին Սոֆիայի փաստաբանական պալատն՝ իր գլխավորությամբ, մասնակցելու է Հայաստանում Ցեղասպանության 100 ամյակի տարելիցին նվիրված միջոցառումներին:

Միջոցառման ընթացքում նաև կազմակերպվեցին սեմինար քննարկումներ «Փաստաբանների պաշտպանությունը» և «Վեճերի լուծումն արբիտրաժային դատարանում» թեմաներով:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ

➢ ***«Սիրիահայերին իրավական աջակցություն» փաստաբանական ծրագիր.***

2014 թվականի փետրվար ամսին Փաստաբանների պալատում մեկնարկել է «Սիրիահայերին իրավական աջակցություն» փաստաբանական ծրագիրը, որը նպատակ է հետապնդում անվճար իրավական օգնություն տրամադրել ծանր սոցիալ-հոգեբանական վիճակում գտնվող տեղահանյալ սիրիահայերին, ինչպես նաև օժանդակել վերջիններիս առավել արագ ինտեգրվել Հայաստանի Հանրապետության տարածքում:

Ծրագիրը պայմանականորեն կարելի է բաժանել երկու փուլի. առաջին փուլի շրջանակներում սիրիահայերին տրամադրվում է անվճար իրավական օգնություն (խորհրդատվություն, առանձին դեպքերում նաև իրավական փաստաթղթերի կազմում և դատական ներկայացուցչություն): Ծրագիրն առավել արդյունավետ դարձնելու նպատակով Փաստաբանների պալատի աշխատակազմի կողմից սիրիահայերին իրավական խորհրդատվություն է տրամադրվում նաև առցանց՝ Ֆեյսբուք (Facebook) սոցիալական ցանցում հատուկ այդ նպատակով ստեղծված «Սիրիահայերին իրավական աջակցություն» խմբի միջոցով, որին արդեն անդամակցում են ավելի քան հազար սիրիահայեր:

Ծրագրի երկրորդ փուլը ենթադրում է առաջին փուլի ընթացքում սիրիահայերի կողմից հաճախ տրվող հարցերի, ինչպես նաև ծրագրի շրջանակներում կատարված այլ ուսումնասիրությունների արդյունքում ի հայտ եկած հարցերի շուրջ ձեռնարկի մշակում և տպագրություն, որը կտարածվի մասնավորապես սիրիահայերի շրջանում, ինչը կարծում ենք, օգտակար կլինի Հայաստանի Հանրապետությունում բնակություն

հաստատելու կամ գործունեություն իրականացնելու ընթացքում սիրիահայերի մոտ ծագող իրավական հարցերի պարզաբանման համար: Ձեռնարկի տպագրությունն իրականացվել է արևելահայերեն, արևմտահայերեն, արաբերեն և անգլերեն լեզուներով: Ձեռնարկի շնորհանդեսը տեղի է ունեցել 2014 թվականի հոկտեմբերին:

Ութ ամիսների ընթացքում ծրագրին մասնակից են դարձել վաթսունից ավելի սիրիահայեր:

Փաստաբանների պալատը ծրագրի ամբողջ ընթացքն ապահովել է սեփական ռեսուրսների (այդ թվում՝ ֆինանսական) միջոցով, իսկ ձեռնարկի տպագրությանն աջակից է հանդիսացել Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակը:

➢ ***«Իրազեկ բանակ» փաստաբանական ծրագիր.***

Փաստաբանների պալատը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի հետ համատեղ 2014 թվականի ապրիլ ամսին մեկնարկել է «Իրազեկ բանակ» խորագրով փաստաբանական ծրագիրը, որի նպատակն է ՀՀ և ԼՂՀ զինված ուժերում՝ սպայական անձնակազմի և ժամկետային զինծառայողների մոտ իրավագիտակցության բարձրացումը:Ծրագիրն իրականացվել է դասախոսություն-հանդիպումների ձևով, որոնք վերաբերում են սպաների սոցիալական իրավունքներին, զինվոր-սպա փոխհարաբերություններում ծագող հարցերին, ժամկետային զինծառայողների իրավունքներին, պարտականություններին՝ ինչպես ծառայության ընթացքում, այնպես էլ ետծառայական շրջանում: Դասախոսությունների շրջանում ներկայացվել է նաև ԼՂՀ հիմնախնդրի միջազգային իրավական կարգավորման վերաբերյալ մոտեցումներ:

Ծրագրի շրջանակներում Փաստաբանների պալատի ներկայացուցիչներ դասախոսություններով այցելել են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության պաշտպանության բանակի հինգ խոշոր զինվորական ստորաբաժանումներ հանդիպելով 1000-ից ավելի զինվորների հետ: Փաստաբանների պալատը 2015 թվականի համար նախատեսում է զինվորների իրավունքները պարզաբանող վավերագրական տեսաֆիլմ ստեղծել :

➢ ***<u>Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման և Ցեղասպանությունների կանխարգելման ուղղությամբ աշխատանքներ իրականացնող հանձնախմբի գործունեության ծրագիր.</u>***

Փաստաբանների պալատը՝ Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ ստեղծել է Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման և Ցեղասպանությունների կանխարգելման ուղղությամբ աշխատանքներ իրականացնող հանձնախումբ:

Հանձնախմբի նպատակն է՝ Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման հիմնախնդրի վերաբերյալ իրավա-պատմա-քաղաքական վերլուծություններով, ինչպես նաև հատկապես միջազգային հանդեսներում և մամուլում համապատասխան հրապարակումներով և հոդվածներով հանդես գալը: Հանձնախումբը բաց է Ցեղասպանության միջազգային դատապարտման ուղղությամբ աշխատանքներ իրականացնող կառույցների հետ ակտիվ համագործակցության հարցում:

* * *

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

➢ ***<u>Աշխատավորների իրավունքների պաշտպանության միջազգային օր.</u>***

Աշխատավորների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ՝ 2014 թվականի մայիսի 1-ին, Փաստաբանների պալատը նախաձեռնել էր *«Պաշտպանված աշխատող, բարեխիղճ գործատու՝ հզոր հայրենիք»* անվանումը կրող բացօթյա միջոցառում Երևանում՝ Հյուսիսային պողոտայում: Միջոցառման ընթացքում Փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի փաստաբանները քաղաքացիներին տրամադրում էին իրազեկման թերթիկներ, որոնցում հակիրճ ամփոփված էին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ աշխատողների համար սահմանված հիմնական իրավունքներն ու պարտականությունները:

➢ ***<u>Հաղթանակի և խաղաղության տոն.</u>***

2014 թվականի մայիսի 9-ին Հաղթանակի և խաղաղության տոնի կապակցությամբ Փաստաբանների պալատի նախագահն ընդունել է վետերան փաստաբաններ Նարիման Միրզաբեկյանին, Մայիս Ավետիսյանին, Հրաչիկ Գոգինյանին և շնորհավորել նրանց Հայրենական պատերազմում Ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակի, Շուշի քաղաքի ազատագրման և Արցախի բանակի ստեղծման կապակցությամբ:

Փաստաբանների պալատի նախագահի որոշումով վետերան փաստաբանները պարգևատրվել են անվանական ժամացույցներով:



➢ ***Երեխաների պաշտպանության միջազգային օր.***

Փ աստաբանների պալատը տոնել է երեխաների պաշտպանության միջազգային օրը: 2014 թվականի հունիսի 1-ին Փաստաբանների պալատը փաստաբաններին և լրագրողներին իրենց զավակների հետ հրավիրել էր Փաստաբանների պալատ՝ նշելու երեխաների պաշտպանության միջազգային օրը:

Մ անուկների պաշտպանություն օրը նշանավորվել է նրանով, որ երեխաների համար պատրաստվել էին բազմաթիվ անակնկալներ: Նրանք պալատի շենքի առջև կավճանկարներ են պատկերել, այնուհետև շրջայց են կատարել շենքում: Երեխաները գրել են նաև շարադրություն *«Ո՞վ է փաստաբանը»* թեմայով:

Ե րեխաների օրը Փաստաբանների պալատում ուղեկցվել է տարատեսակ խաղերով, սպորտային ներկայահանդեսով, ինչպես նաև հյուրասիրությամբ:

Փաստաբանների պալատում յուրաքանչյուր շաբաթվա հինգշաբթի օրը համարվում է ընդունելության օր, որի ընթացքում քաղաքացիները կարողանում են իրենց հետաքրքրող հարցերով անվճար իրավական օգնություն ստանալ Փաստաբանների պալատի աշխատակազմում:

2013 թվականի հոկտեմբերի 24-ից* 2014 թվականի դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում Փաստաբանների պալատում կազմակերպվել է շուրջ **480** քաղաքացու ընդունելություն:

Փաստաբանների պալատը կազմակերպվող մամլո ասուլիսների միջոցով համապատասխան հարթակ է ստեղծել փաստաբանների համար, որի միջոցով փաստաբաններն իրենց գործերն են լուսաբանում: Ներկայիս դրությամբ ընդհանուրը կազմակերպվել են 17 մամլո ասուլիսներ:

Փաստաբանների պալատի մամուլի ծառայությունը 2013թ նոյեմբերի 1-ից մինչև 2014 դեկտեմբերի 15-ը տարածել է շուրջ մամուլի 160 հաղորդագրություններ, հայտարարություններ և պարզաբանումներ, որոնք վերաբերվել են Փաստաբանների պալատում տեղի ունեցած միջոցառումներին, փաստաբանների իրավունքների պաշտպանության խախտումներին, կամ եղել են պարզապես դիրքորոշումներ այս կամ այն օրենքի նախագծերի վերաբերյալ:

Փաստաբանների պալատում ինտենսիվ կազմակերպվում և լուսաբանվում է ակումբի գործունեությունը, որը փաստաբանների քննարկումների միջոցով նպաստում է փաստաբանների տեսակետների առաջխաղացմանը: Ակումբի նիստերի ընթացքում փաստաբանների քննարկման առարկա են դառնում տարբեր օրենսդրական ակտերի նախագծեր, ինչպես նաև փաստաբաններին հետաքրքրող իրավական հարցեր: 2013 թվականի հոկտեմբերի 4-ից մինչ դեկտեմբերի 15-ը կազմակերպվել են **30** ակումբի նիստեր, որոնց ընթացքում, մասնավորապես քննարկվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը, մեղադրյալի, տուժողի և

*Քաղաքացիների ընդունելությունը Փաստաբանների պալատում կազմակերպվում է այս ժամանակահատվածից սկսած:

վկայի ցուցմունքի դեպոնացման ինստիտուտը, բարոյական վնասի փոխհատուցման հարցերը, անչափահասների մասնակցությամբ քաղաքացիական գործերի քննությունը, պատասխանատվությունը նախաքննական տվյալների հրապարակման դեպքում և այլ թեմաներ:

Հասարակության հետ կապը պահելու նպատակով Փաստաբանների պալատի երիտասարդական խորհուրդը www.blognews.am կայքի հետ համատեղ 2014թ թվականի մայիս ամսից իրականացնում է *«Հարց իրավաբանին»* ծրագիրը, որի միջոցով երիտասարդական խորհրդի փաստաբանները պարզաբանումներ են տալիս քաղաքացիների կողմից առավել շատ բարձրացված իրավական հարցերի վերաբերյալ: Նշված ծրագրի շրջանակներում ավելի քան 60 քաղաքացիներին հուզող իրավական հարցերով պատասխաններ են տրվել և հրապարակվել համացանցում:

Հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության մասին հանրության իրազեկությունն ապահովելու նպատակով 2014 թվականի սեպտեմբեր ամսից Փաստաբանների պալատը «Առավոտ» օրաթերթի նախաձեռնությամբ մեկնարկել է հանրային պաշտպանների գործերի՝ արդարացումների և կարճումների լուսաբանման գործընթացը: Մեկ ամսվա ընթացքում 5 հանրային պաշտպանների արդարացումներ ու դատավարական հաղթանակներ լուսաբանվել են համացանցում:

* * *

2014 թվականի հունվար ամսից Փաստաբանների պալատի www.advocates.am կայքէջը գործում է որակապես բարձր նոր գործիքակազմով:

Փաստաբանների պալատի կայքէջը հագեցած է փաստաբանների պալատի մասին ամբողջական և մատչելի տեղեկատվությամբ:

Կայքէջում ներդրված է փաստաբանների որոնման նոր համակարգ, որի միջոցով կայքի այցելուները կարող են ըստ մասնագիտացման, ըստ գործունեության իրականացման վայրի (տարածաշրջանի) կամ այլ չափանիշների որոնում կատարել գործող փաստաբանների շրջանում:



Կայքէջում հրապարակվում է Փաստաբանների պալատի ներքին իրավական ակտերը, ինչպես նաև հաշվետվությունները:

Հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության վերաբերյալ հանրային իրազեկումն ապահովելու նպատակով Փաստաբանների պալատի կայքէջում հրապարակվում են հանրային պաշտպանների վարած գործերի վերաբերյալ հաշվետվությունները, որոնցում հստակ երևում է հաշվետու ժամանակահատվածում հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը և գործերի վիճակագրությունը:

Փաստաբանների պալատի ֆինանսական գործունեության թափանցիկությունն ապահովելու նպատակով Փաստաբանների պալատի կայքէջում հրապարակվում է Փաստաբանների պալատի եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները, որտեղ արտացոլված են հաշվետու ժամանակահատվածում փաստաբանների

պալատի դրամական մուտքերն ու ելքերը:

2014 թվականի սեպտեմբեր ամսից յուրաքանչյուր փաստաբան կայքի իր անձնական էջից կարող է առցանց հետևել Փաստաբանների պալատի խորհրդի ընթացիկ և կարգապահական նիստերին:

Վերապատրաստման ժամեր		
Պարտադիր անհրաժեշտ է լրացնել	Լրացրել է	Մնացել է
24	24	0

Անդամավճար	
Ամսաթիվ	Անդամավճարի պարտք
15.12.2014	5000 դրամ

Առցանց վճարում
5000 դրամ
Վճարել

Այսուհետ փաստաբանների անձնական էջերում հրապարակվում են փաստաբանների վերապատրաստման անցած ժամաքանակի, ինչպես նաև անդամավճարի պարտքի վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ դեկտեմբեր ամսից սկսած փաստաբանները հնարավորություն ունեն առցանց վճարել անդամավճարի գումարն իրենց բանկային քարտերով:

Փաստաբանների պալատի կայքէջում փաստաբանների անձնական էջերի միատեսակությունն ապահովելու նպատակով Փաստաբանների պալատը 2014 թվականի հունվար ամսից նախաձեռնել է Փաստաբանների պալատում փաստաբանների լուսանկարահանման գործընթացը, որի շրջանակներում 1458 փաստաբանից արդեն լուսանկարահանվել են ավելի քան 900 փաստաբան:



Կայքում սահմանվել է նաև «**ընթերականների արխիվ**» էջը, որտեղ փաստաբաններն իրենք են մուտքագրում քննչական գործողություններին մասնակցած ընթերականների տվյալները: Այդ բազայից կարող են օգտվել միայն փաստաբանները: Էջի փնտրման համակարգի միջոցով փաստաբանը կարող է ստուգել, թե արդյո՞ք ընթերական այլ գործերով նույնպես մասնակցել է որպես ընթերակա, թե՝ ոչ: Նման նախաձեռնությունը հնարավորություն է տալիս բացահայտելու այսպես կոչված «մշտական ընթերականներին»:

* * *

Փաստաբանների պալատն իր պաշտոնական կայքէջի արդյունավետությունը, ինչպես նաև այցելությունների շարժը դիտարկելու նպատակով մշտապես հետևում է տեղեկատվական տեխնոլոգիաների վերլուծության՝ www.similarweb.com կայքէջի տրված վիճակագրությանը (դիտարկումն իրականացվել է 2014 թվականի հունիսից 2014 թվականի նոյեմբեր ամիսների ընթացքում).

Նկար թիվ 1

Փաստաբանների պալատի կայքէջի այցելությունների վիճակագրություն.

Estimated Visits	8K
Time On Site	00:05:20
Page Views	6.53
Bounce Rate	32.70%

Նշված պատկերում արտացոլված վիճակագրությունից բխում է, որ 2014 թվականի նոյեմբեր ամսվա այցելությունների քանակը կազմում է 8000 այցելություն, ընդ որում՝ յուրաքանչյուր այցելուի կողմից կայքի ուսումնասիրության (կայքում մնալու) միջին տևողությունը կազմում է 5 րոպե 20 վայրկյան, որի ընթացքում դիտարկվում է մոտ 6,53 էջ: Այցելուների 32.70 %-ը անձամբ տարածում են կայքէջի հղումը:

Նկար թիվ 2

Փաստաբանների պալատի կայքէջի այցելությունների վիճակագրությունն ըստ հղումների.



- **ուղիղ այցելությունների տոկոսային հարաբերակցություն (www.advocates.am հասցեն գրելով).**
- **այլ կայքերում դրված հղումով այցելությունների տոկոսային հարաբերակցություն.**
- **փնտրողական կայքերով այցելությունների տոկոսային հարաբերակցություն.**
- **սոցիալական ցանցերից հղումով այցելությունների տոկոսային հարաբերակցություն.**

էլեկտրոնային փոստերի միջոցով այցելությունների տոկոսային հարաբերակցություն.

պլանշետների համար նախատեսված ծրագրերով (application) այցելությունների տոկոսային հարաբերակցություն.

Նկար թիվ 3

Փաստաբանների պալատի կայքէջի այցելությունների վիճակագրությունը ըստ տարածաշրջանների.



* * *

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

➢ ***Երիտասարդական խորհուրդ.***

Փաստաբանների պալատի երիտասարդական խորհուրդը հասարակական հիմունքներով գործող խորհրդակցական մարմին է, որը ստեղծվել Փաստաբանների պալատի նախագահի 11.11.2013թ. թիվ 39-Լ որոշմամբ երկու տարի ժամկետով:

Երիտասարդական խորհրդի նպատակն է՝

ա) աջակցել վերջին երեք տարում փաստաբանական գործունեության արտոնագիր ստացած և հետագայում նոր արտոնագրեր ստացող փաստաբանների (այսուհետ՝ Երիտասարդ փաստաբաններ)՝ մասնագիտական ոլորտում ինտեգրման գործընթացին,

բ) վեր հանել Երիտասարդ փաստաբանների մասնագիտական գործունեության ընթացքում առաջացած խնդիրները, ներկայացնել Պալատին և աջակցել դրանց լուծմանը,

գ) նպաստել Երիտասարդ փաստաբանների և փաստաբանների համագործակցությանը, Երիտասարդ փաստաբանների և փաստաբանների ոչ մասնագիտական շփումներին (կազմակերպել ոչ պաշտոնական հանդիպումներ, տարաբնույթ մշակութային և ժամանցային միջոցառումներ),

դ) կապեր հաստատել այլ երկրներում գործող նմանատիպ կառույցների հետ:

Իր գործունեության ընթացքում երիտասարդական խորհուրդը կազմակերպել է անվճար խորհրդատվություններ, այց մանկատուն: Երիտասարդական խորհրդի ներկայացուցիչներն իրականացրել են նաև դիտորդական առաքելություն Փաստաբանական դպրոցի ընդունելության, ինչպես նաև Փաստաբանների պալատի որակավորման քննությունների ընթացքում:

Ներկայումս երիտասարդական խորհուրդը Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA/ROLI) հայաստանյան ներկայացուցչության հետ համագործակցության շրջանակներում նախաձեռնել է էլեկտրոնային ամսագրի մշակման գործընթացը, որտեղ կտպագրվեն փաստաբանների և իրավաբանների հոդվածներ:

Երիտասարդական խորհուրդն առաջիկայում նախատեսում է

մեկնարկել *«Իրավական անկյուն»* հեռուստահաղորդումը, ավագ դպրոցներում կազմակերպել փաստաբանի և փաստաբանական գործունեության իրականացման առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկատվական քննարկումներ, ինչպես նաև անվճար իրավական օգնության տրամադրումն ապահովել նաև Հայաստանի Հանրապետության մարզերում:

➢ ***<u>Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողով.</u>***

Փաստաբանների պալատի նախագահի 12.08.2014թ. թիվ 294-Լ որոշմամբ հաստատվել է Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի գործունեության կարգը:

Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողով ստեղծելու անհրաժեշտության հիմքում դրվել են հետևյալ հանգամանքները՝

– Հայաստանի Հանրապետությունում փաստաբանության՝ որպես արդարադատության համակարգի կարևորագույն ինստիտուտի զարգացման և մասնագիտության նկատմամբ հարգանքի ձևավորման համար կարևորագույն նախադրյալ է հանդիսանում Փաստաբանների պալատի անդամ փաստաբանների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գործունեություն ծավալող այլ պետության փաստաբանների իրավունքների պաշտպանությունն ապահովելը, ինչպես նաև այդ իրավունքների արդյունավետ իրացման համար անհրաժեշտ միջավայր ստեղծելը,

– փաստաբանների իրավունքների պաշտպանության հարցում Փաստաբանների պալատի առջև դրված խնդիրների և նպատակների առավել արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է միասնական, նպատակաուղղված և համակարգված քաղաքականություն իրականացնող կառույցի առկայություն:

Հանձնաժողովի նպատակն է միջոցներ ձեռնարկել փաստաբանների իրավունքներն ու մասնագիտական գործունեությունը բոլոր տեսակի (հատկապես՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների) սպառնալիքներից, խոչընդոտներից կամ ցանկացած տեսակի այլ հակահիրավական միջամտությունից (ոտնձգությունից) պաշտպանելու համար:

Իր նպատակի իրականացման համար Հանձնաժողովի առջև

դրված են հետևյալ խնդիրները.

1. հավաքագրել և վերլուծել փաստաբանների մասնագիտական իրավունքների և Օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված երաշխիքների խախտման վերաբերյալ տեղեկատվությունը.

2. քննության առնել փաստաբանների մասնագիտական իրավունքների և Օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված երաշխիքների խախտման վերաբերյալ փաստաբանների դիմումները կամ լրատվամիջոցների հաղորդումները.

3. հրատապ արձագանքել փաստաբանների իրավունքները խախտող միջադեպերին և ձեռնարկել համապատասխան միջոցներ այդ խախտումների վերացման ուղղությամբ.

4. Փաստաբանների պալատի խորհրդին և նախագահին ներկայացնել համապատասխան առաջարկներ (ընդհուպ՝ օրենքի նախագիծ) փաստաբանների իրավունքների խախտումների վերացման և կանխարգելման համար անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու համար.

5. վերլուծել արձանագրված խախտումները և վարել համապատասխան վիճակագրություն:

Հանձնաժողովն իր գործունեության կարճ ժամանակահատվածում 24.09.2014թ. հանդես է եկել փաստաբան Արշավիր Խալափյանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման վերաբերյալ համապատասխան հայտարարությամբ:

* * *

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

№	Միավորը	04 հոկտեմ-բերի 2012թ.-ից 04 հոկտեմ-բերի 2013թ.	04 հոկտեմ-բերի 2013թ.-ից 04 հոկտեմ-բերի 2014թ.	Տարբե-ությունը թվային արտա-հայտ-մամբ	Տարբե-ությունը տոկոսա-յին արտա-հայտ-մամբ
	Փաստաբանների պալատի իրավական ակտեր				
1	Նախագահի հրամաններ	140	219	79	56.43%
2	Նախագահի որոշումներ՝ կարգապահա-կան գործերը ներառյալ	169	418	249	147.34%
3	Հարուցված կարգապահա-կան գործեր	90	140	50	55.56%
4	Կարգապահա-կան վարույթի հարուցումը մերժելու մասին որոշումներ	7	38	31	442.86%
5	Փաստաբանների (այդ թվում՝ փաստ.օգնա-կանների) նկատմամբ հարուցված կարգապահա-կան վարույթների ընդհանուր քանակը	96	144	48	50.00%

6	Անդամավճարը չվճարելու հիմքով փաստաբանների (այդ թվում՝ փաստ. օգնականների) նկատմամբ հարուցված կարգապահա-կան վարույթները	65	72	7	10.77%
7	Փաստաբանների նկատմամբ քաղաքացիների (այդ թվում՝ պետական մարմինների բողոքներ և դատական սանկցիաներ) բողոքներ	96	173	77	80.21%
Հարուցված կարգապահական գործերի ընթացքը (ներառյալ՝ կիրառված կարգապահական տույժերը)					
1	Կարճված կարգապահա-կան վարույթներ	55	54	-1	-1.82%
2	Կարգապահա-կան պատաս-խանատվության ենթարկված փաստաբան-ների թիվը, **այդ թվում՝**	32	35	3	9%
3	Նկատողություն	11	21	10	90.91%
4	Խիստ նկատողություն	18	5	-13	-72.22%
5	Լրացուցիչ վերապատ-րաստման դասընթաց-ներին մասնակցություն	2	3	1	50.00%
6	Տուգանք	1	3	2	200.00%

7	Փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում	**0**	**3**	**3**	**100.00%**
Փաստաբանների պալատի փաստաթղթաշրջանառություն (գործավարություն)					
1	Մտից գրություններ	**748**	**1660**	**912**	**121.93%**
2	Ելից գրություններ	**775**	**1501**	**726**	**93.68%**

* * *

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

2013 – 2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

№	նախընտրական ծրագրի դրույթը (կետը)	նախընտրական ծրագրի դրույթի կատարողականը
	ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՁԱՐԳԱՑՈՒՄ	
	Հանրային պաշտպանության ինստիտուտի հետագա զարգացման և բարեփոխումների իրականացման ապահովում	
➢	ՀՊԳ կարիքների գնահատում, որին մասնակից կարող են դառնալ պետական և այլ հաստատությունների ներկայացուցիչները, իսկ արդյունքները՝ հրապարակվել հանրության համար.	***Կատարվել է՝ շարունակական***
➢	անվճար իրավաբանական օգնության շրջանակի հստակեցում.	***Կատարվել է մասնակի***
➢	հաշվի առնելով անձի գույքային դրությունը՝ անվճար իրավաբանական օգնության տրամադրման չափանիշների նախատեսում՝ այդ հարցի լուծման անհրաժեշտությունը պահելով պետական և միջազգային մարմինների ուշադրության կենտրոնում.	***Կատարման ընթացքում է***
➢	ՀՊԳ պաշտպանների թվաքանակի ավելացում, իսկ մարզերում շահերի բախման դեպքում լուծման եղանակների մշակում.	***Առաջարկը՝ հիմնավորումով ներկայացվել է կառավարություն***
➢	ՀՊԳ պաշտպան դառնալու ընթացակարգի թափանցիկության բարձրացում և մրցակցության եղանակների նախատեսում համապատասխան ներքին իրավական ակտի նախագծման և ընդունման եղանակով.	***Կատարված է***
➢	ՀՊԳ պաշտպանների մասնագիտացում.	***Կատարվել է՝ շարունակական***
➢	ՀՊԳ պաշտպանների դասային աստիճանների և խրախուսման	***Դեռ կատարված չէ***

	եղանակների ներդնում.	
➢	ՀՊԳ-ում ռոտացիոն համակարգի ներդնում՝ հաստիքների որոշակի տոկոսը սկսնակ փաստաբաններով համալրելու նպատակով.	***Կատարվել է՝ շարունակական***
➢	իրավաբանական օգնության դիմելու և տրամադրելու, օգնություն տրամադրող փաստաբաններին ընտրելու և նշանակելու, ծառայությունների որակի նկատմամբ վերահսկողություն և պատասխանատվություն սահմանելու կապակցությամբ ընթացակարգերի մշակում, ընդունում և կիրարկում.	***Կատարվել է՝ շարունակական***
ՀՊԳ-ի հեղինակության բարձրացում		
➢	Հանրային բնույթի միջոցառումների անցկացում, այդ թվում՝ պարբերաբար մարզային այցերի կատարում և իրավաբանական անվճար խորհրդատվության տրամադրում (բաց դռներ) լայն կամ նեղ հարցերի վերաբերյալ միջազգային կառույցների հետ հարաբերությունների հաստատում և դրամաշնորհային ծրագրերի նախագծում և իրականացում.	***Կատարվել է՝ շարունակական***
➢	Պալատում ՀՊԳ արտաքին և միջազգային կապերի պատասխանատուի նշանակում.	***Կատարված է***
➢	ՀՊԳ աշխատակիցների և պաշտպանների կողմից հոդվածների և այլ նյութերի մշակում և հրապարակում.	***Կատարվել է՝ շարունակական***
ՀՊԳ պաշտպանների մասնագիտական որակների բարձրացում և շարունակական վերապատրաստման ապահովում		
➢	Փաստաբանական դպրոցի հետ ՀՊԳ պաշտպանների պարտադիր վերապատրաստման ծրագրերի մշակում՝ ըստ իրավունքի ճյուղերի և առավել հաճախ հանդիպող իրավական հարցերի, իսկ պաշտպանների մասնագիտացման ներմուծման դեպքում՝ ըստ համապատասխան նեղ մասնագիտացումների.	***Կատարվել է՝ շարունակական***

➢	Փաստաբանական դպրոցի կողմից մշակված վերապատրաստման ծրագրերի իրականացում.	***Կատարվել է՝ շարունակական***
➢	օտարերկրյա և/կամ միջազգային կազմակերպությունների հետ համատեղ վերապատրաստման դասընթացների անցկացում.	***Կատարվել է՝ շարունակական***
Իրավաբանական օգնության այլընտրանքային և ՀՊԳ-ի գործունեությանն օժանդակող համակարգերի մշակում		
➢	բացի հանրային պաշտպաններից, անվճար իրավաբանական ծառայություններ մատուցելու պատրաստակամություն ունեցող փաստաբանների ցանցի ստեղծում, pro bono մշակույթի ժողովրդականացում, այդ մշակույթի ամրապնդմանն ուղղված միջոցառումների, խրախուսման եղանակների փնտրում (հարկային բեռի նվազեցում տրամադրված անվճար իրավաբանական օգնությանը համաչափ և այլն)	***Կատարվել է՝ շարունակական***
➢	ՀՀ-ում բնակչությանն անվճար իրավաբանական օգնություն տրամադրող կազմակերպություններին հայտնաբերելու ուղղությամբ հետազոտության անցկացում՝ համակարգելով այդ հետազոտության արդյունքներն ըստ տրամադրվող իրավաբանական օգնության ոլորտների, ինչպես նաև նախաձեռնությունների և առաջարկությունների ներկայացում	***Կատարվել է՝ շարունակական***
ՀՊԳ-ի աշխատանքների իրականացման թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում		
➢	ՀՊԳ-ի կողմից եռամսյա, տարեկան հաշվետվությունների տրամադրում և Պալատի ինտերնետային կայքում դրանց տեղադրում.	***Կատարվել է՝ շարունակական***
➢	ՀՊԳ գործունեության մոնիտորինգի իրականացում և արդյունքների հրապարակում զանգվածային լրատվամիջոցներով, ինչպես նաև	***Կատարվել է՝ շարունակական***

	Պալատի ինտերնետային կայքում.	
➢	Պալատի ինտերնետային կայքում ՀՊԳ-ին նվիրված առանձին ենթաբաժնի նախատեսում, որի թարմացումն իրականացվելու է ՀՊԳ համապատասխան աշխատակիցների կողմից.	***Կատարված է***
➢	ՀՊԳ հաջողված պատմությունների, վերջին նորությունների, ռազմավարական դատավարությունների, փաստաթղթերի, վիճակագրության և այլ նյութերի հրապարակում Պալատի կայքի ՀՊԳ-ի էջում՝ հստակ պարբերականությամբ.	***Կատարվել է՝ շարունակական***
➢	ՀՊԳ-ի շահառուներին պաշտպանների աշխատանքը գնահատող հարցաթերթիկի տրամադրում և արդյունքների վերլուծություն.	***Կատարվել է՝ շարունակական***
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ		
Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի ստեղծում		
➢	Փաստաբանների իրավունքների իրականացման խոչընդոտների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում, տարածում և քննարկումների կազմակերպում.	***Կատարվել է՝ շարունակական***
➢	հանձնաժողովի որոշումների և գործողությունների հրապարակում.	***Կատարված է՝ շարունակական***
➢	իրականացված միջոցառումների տարեկան զեկույցների ներկայացում.	***Կատարվել է՝ շարունակական***
Հարկման ռեժիմի բարելավման միջոցառումների կազմակերպում		
➢	ձեռնարկատիրական գործունեության մյուս տեսակների հարկման ռեժիմից տարբերվող ռեժիմի կիրառում՝ հարկերի նվազեցման և հաշվապահական հաշվառման պարզեցման տեսանկյունից.	***Կատարված է մասնակի***
➢	օրենսդրական փոփոխությունների լոբինգի իրականացում.	***Կատարված է մասնակի***
Օրենսդրական բարեփոխումների կազմակերպում		
➢	Փաստաբանական գործունեությանը	***Կատարված է***

	վերաբերող օրենքների փոփոխություններ մշակող աշխատանքային խմբի ստեղծում.	
➢	Նախագծերի հրապարակային քննարկումների իրականացում.	***Կատարման ընթացքում է***
Անդամավճարների չափի նվազեցմանն ուղղված միջոցառումներ		
➢	աշխատանքային խմբի ստեղծում	***Կատարված է***
➢	վերապատրաստման համար անհրաժեշտ վճարների տնտեսման և Պալատի անդամների ավելացման տենդենցի համատեքստում անդամավճարի նվազեցման վերլուծություն և իրագործում	***Կատարված է***
➢	***Պալատի կայքում քրեական գործերով ընթերակաների բազայի ձևավորում՝ հայտնաբերելու համար «մասնագիտացված» ընթերականերին***	***Կատարված է***
Փաստաբանների վերապատրաստման համակարգի շարունակական զարգացում		
➢	օտարերկրյա փորձի ուսումնասիրում և տեղայնացման հնարավորությունների և կարիքների վերլուծում	***Կատարման ընթացքում է***
➢	փաստաբանների վերապատրաստման ծրագրերի պարբերական արդիականացում,	***Կատարված է՝ շարունակական***
➢	վերապատրաստման գործընթացում փաստաբանների կարիքների բացահայտում և վերապատրաստման արդյունավետության գնահատում,	***Կատարված է՝ շարունակական***
➢	փաստաբանների վերապատրաստման ծրագրերի մշակման գործընթացում փաստաբանների, դատավորների և դատախազների դպրոցների պատրաստման և վերապատրաստման ծրագրերի համեմատական վերլուծություն և կարիքների գնահատում.	***Կատարման ընթացքում է***
➢	ՀՀ մարզերում փաստաբանների վերապատրաստման կարիքների գնահատում և հնարավորության վերլուծություն,	***Կատարված է՝ շարունակական***
➢	օտարերկրյա փաստաբանական դպրոցների հետ փորձի փոխանակման	***Կատարված է՝ շարունակական***

	իրականացում.	
Փաստաբանական դպրոցի կարողությունների հզորացում		
➢	վերապատրաստման դասընթացներ անցկացնողների հավատարմագրման չափորոշիչների և այլ պահանջների նախատեսում և իրականացում,	***Կատարված է***
➢	ընդունելության և ավարտական (որակավորման) քննությունների, ինչպես նաև ընդհանուր ուսումնական գործընթացի մոնիթորինգի անցկացում, համապատասխան առաջարկությունների ձևակերպում.	***Կատարված է***
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ		
Մասնագիտական էթիկայի չափորոշիչների բարձրացում		
➢	Վարքագծի կանոնագրքի դրույթների խախտման դեպքերի վերլուծության աշխատանքային խմբի ստեղծում.	***Կատարման ընթացքում է***
➢	Վարքագծի կանոնագրքի լրամշակում և արդիականացում՝ նախագծերի մշակում՝ հաշվի առնելով Վարքագծի կանոնագրքի դրույթների խախտման վերաբերյալ վերլուծությունները.	***Կատարման ընթացքում է***
Մասնագիտական էթիկային առնչվող հարցերի հրապարակում		
➢	Պալատի խորհրդի կարգապահական որոշումների հրապարակում www.advocates.am ինտերնետային կայքի միջոցով.	***Կատարման ընթացքում է***
➢	Պարբերաբար (տարին մեկ անգամ) վարքագծի հարցերի վերաբերյալ համաժողովի կազմակերպում.	***Կատարված չէ***
Պալատի խորհրդի կարգապահական որոշումների և գործը նախապատրաստող անձանց եզրակացությունների ուսումնասիրություն և միասնական պրակտիկայի ձևավորում		
➢	միասնական պրակտիկայի ձևավորման համար անհրաժեշտ թեմաների շրջանակի որոշում.	***Կատարման ընթացքում է***
➢	տարբեր ձևաչափերով էթիկայի հարցերի	***Կատարման ընթացքում է***

	թեմատիկ քննարկումների կազմակերպում միասնական պրակտիկայի խթանման համար.	
➢	միասնական պրակտիկայի ամփոփում.	
ՊԱԼԱՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ		
➢	***Պալատի խորհրդի նիստերին առցանց հետևելու համակարգի ներդնում***	***Կատարված է***
➢	***Եռամսյակային կտրվածքով Պալատի կայքում ֆինանսական հոսքերի՝ մուտքերի և ծախսերի մասին տեղեկատվության հրապարակում***	***Կատարված է՝ շարունակական***
➢	***Պալատի կայքում նախատեսվող տեղական և արտասահմանյան գործուղումների մասին տեղեկությունների հրապարակում՝ ապահովելով հնարավորինս մեծ քանակությամբ փաստաբանների ընդգրկվածությունը, ինչպես նաև կառավարման ժամանակակից ծրագրերի ներդնում, որով հնարավոր կլինի ապահովել փաստաբանների արդար մասնակցությունը Պալատի կողմից կազմակերպվող միջոցառումներին***	***Կատարված է՝ շարունակական***
➢	***Պալատում մամլո քարտուղարի կամ պատասխանատուի դերի բարձրացում***	***Կատարված է***
ՊԱԼԱՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԶՈՐԱՑՈՒՄ		
➢	***Պալատի տարածաշրջանային ներկայացուցչությունների կամ համակարգողների ինստիտուտի ներդնում***	***Կատարված է***
Հասարակության հետ կապերի ընդլայնում		
➢	տարածքային ներկայացուցչությունների կամ համակարգողների միջոցով քաղաքացիների շրջանում իրազեկվածության բարձրացում.	***Կատարված է՝ շարունակական***
➢	փաստաբանների այցերի կազմակերպում մարզեր և քաղաքներ՝ քաղաքացիներին հուզող հարցերի լուսաբանման համար.	***Կատարված է՝ շարունակական***
Հանրային պաշտպանության լուսաբանում և վերլուծություն		

➢	հանրությանն առավել հետաքրքրող թեմաների շուրջ հոդվածների տպագրում.	***Կատարված է՝ շարունակական***
➢	հանրությանն առավել հետաքրքրող թեմաների շուրջ հեռուստահաղորդումների կազմակերպում.	***Կատարման ընթացքում է***
➢	Պալատում և տարածքային ներկայացուցչություններում բաց դռների անցկացում.	***Կատարված է՝ շարունակական***
➢	Պալատի կայքի կամ սոցիալական ցանցի միջոցով քննարկումների (ֆորումների) իրականացում.	***Կատարված է՝ շարունակական***
➢	Փաստաբանական դպրոցի դերի և ընդունելության մասին իրազեկում հնարավոր շահառուների շրջանակներում.	***Կատարված է՝ շարունակական***
Հասարակության հետ կապերի ռազմավարության մշակում		
➢	արտաքին աշխարհի և շահագրգիռ կողմերի հետ ունեցած Պալատի կապերի ընդլայնում և քննարկումների հաճախականության ավելացում.	***Կատարված է՝ շարունակական***
➢	զանգվածային լրատվամիջոցների հետ կապերի ամրապնդում.	***Կատարված է՝ շարունակական***
➢	Պալատի կայքի վերազինում,	***Կատարված է՝ շարունակական***
➢	Պալատի տեսակետների առաջխաղացման նպաստում այն հարցերի կապակցությամբ, որոնք վերաբերում են մասնագիտությանը, արդարադատության իրականացմանը, իրավական բարեփոխումներին, իրավունքի գերակայության ամրապնդմանը և այլն:	***Կատարված է՝ շարունակական***
Բացի «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված մարմիններից այլ ինքնաբուխ և ինքնավար հանձնաժողովների (օրինակ՝ երիտասարդ փաստաբանների հանձնաժողով և այլն) գաղափարի առաջխաղացում, այդ թվում աշխատանքային խմբերի ձևավորում՝ պետական տարբեր մարմինների հետ հարաբերություններում կուտակված խնդիրները քննարկելու և լուծման ուղիներ նախանշելու նպատակով		
Փաստաբանների միջև տեղեկատվության փոխանակման որակի բարձրացում		
➢	տեղեկատվության որակական և	***Կատարված է՝***

	քանակական ցուցանիշի բարձրացում Պալատի և Փաստաբանական դպրոցի պաշտոնական կայքերի միջոցով.	***շարունակական***
➢	կայքում համապատասխան ցանցի ստեղծում, որը հասանելի կլինի բոլոր փաստաբաններին և ի թիվս այլ նպատակների հնարավորություն կընձեռի տեղեկություն ստանալ վերապատրաստում անցած ժամերի, անդամավճարների պարտքի մասին, ստանալ Պալատի վարչական մարմինների տեղեկացումները, հարցումները, վերջին նորությունները և այլն.	***Կատարված է՝ շարունակական***

* * *